

Գ.— ԷՆԿԻՐԻԻ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԱՌՁԵԻ

«Ճէրիտէի Մէհաքիմ» անուն դատական լրագրին մէջ կը կարդանք հետեւեալը: «Ստորեւ կը հրատարակենք անփոփոխ պարունակութիւնն այն վեռագրին որ Էնկիւրիի վերաբերեալ ատեանի պատժական ճիւղին կողմէ տրուելով, այս անգամ Պոլսի վեռաքեկ ատեանէն վաւերացուեցաւ»:

Էնկիւրիի ամբաստանիչ ատեանի (Հէյէքը Իքամիէ) պատրաստած եւ մատուցած վեց կտոր ամբաստանագրերուն պարունակութեանը նայելով, ստորեւ անուններն դրուած անձինք ամբաստանուած են իբրեւ մասնակցող հետեւեալ ոճիրներուն:

1892 (1308) տարուոյ Դեկտեմբեր 25 Ուրբաթ գիշերուան մէջ սոյն ամբաստանեալները Կեսարիա, Տէվէլու, Եոզղատ, Չորում, Մարգուան, Թենոս, Աղիզիէ, Կեմերէք դասապաներու եւ նաեւ ուրիշ դասապաներու ու գիւղերու մզկիթներու դռներուն եւ այլ տեղերուն վրայ փակցուած ստայող յայտարարութիւնները իրենք պատրաստած եւ հրատարակած են:

Այս միջոցով իրենց նպատակն էր Օսմանեան հողին վրայ բնակող հայերը դրդուել, որ գէնք առնելով յեզափոխութիւն հանեն Կայսրութեան եւ Կառավարութեան դէմ, եւ դործադրելու համար այս նպատակը, միաբանած են՝ որ իրենց շրջանակին մէջ գտնուող անձերը թալլեն, կողոպտեն, անոնց վրայ յարձակին, աւագակուցին ընեն, թղթատարներու վրայ բռնանան եւ սպանութիւններ գործեն, եւ իրենց այս համաձայնութեան համեմատ, քանի մը տեղեր հարստահարութիւններ, աւագակուցիւններ, մարդասպանութիւններ ըրած են: Սոյն ոճիրներով ամբաստանուած անձինք հետեւեալներն են:

Պոլսեցի Անտոն Ռշտունի, Կեսարացի Փափազեան Քերովբէ, Ճէպլիտէլիքեան Յակոբ, Գարա Բարսեղ Օղլու Դանիէլ, Եսայեան Գրիգոր, Տիրող Օղլու Յովհաննէս, Ճէվահիրճեան Ռուբէն, Ալաճաճեան Կարապետ, Տէօքմէճեան Բարսեղ, Տ. Դանիէլ քահանայ, Օհան Օղլու Գասապ Մամաս, Գարաքեհեան Օղլու Յովհաննէս, Քէթման Օղլու Կարօ, դպրոցի դասատու Շաւարշ, Չոմազեան Յակոբ, Փաստարան Արսէն, Թոփալ Սիմուղ Օղլու Արթին, Յակոբ Պազեան, Կերոնեան Կարապետ, Ճիվանեան Մարտիրոս, Գայսեր Օղլու Աւետիս, Պոյաճեան Ստեփան, Ետզուպ Հաճի Օղլու Փանոս, Աշճի Բարսեղ Օղլու Կիւլպէնկ, Կեղիզ Թորոս Օղլու Միհրճան, Պետրոս Օղլու Միսաք, Արզման Օղլու Յովհաննէս, Տէվէլուցի Սուրբիկ կինը, Տարնուզ Օղլու Դարբիէլ, Սինան Օղլու Արշակ, Ղազարոսեան Գրիգոր, Քել Արթին Օղլու Կարապետ, Տայի Օղլու Առաքել, Պիշաքճի Օղլու Ճիվան:

Մարգուանցի Թումայեան Կարապետ, Գանայեան Յովհաննէս, Օղլազճեան Պաշատուր, Ուզուն Օղլու Գալոս, Միրաիլ Օղլու Սերգիս, Նահապետեան Նահապետ, Փափազեան Մկրտիչ, Գարակէօզ Օղլու Արթին, Ատիր Օղլու Ղազարոս, Վարդան Օղլու Միհրան, Տօլանեան Յակոբ, Կիւրինցի Թորոս, Սերաստացի քարոզիչ Մարտիրոս, Պէյրամեան Յակոբ, Եոզղատցի գալլմճի Մոշօ, Քէճէճեան Միսաք, Իգարեան Յովհաննէս, Քէպաճեան Սենեքերիմ, Աթէշ Օղլու Միքէ, Մահազեան Գրիգոր, Աֆէ Միհրան, Քէօշքէր Օղլու Ղազարոս, Չորումցի Պաշատուր, Թին Օղլու Պետրոս, Ճիվան Օղլու Սահակ:

Այս անձերու վերաբերեալ բաղմաթիւ ամբաստանագրերը 30 Ապրիլ 1309ին Էնկիւրիի պատժական դատարանին մատուցանելով, տեսնուեցաւ թէ

միևնույն ոճերը բազմաթիւ անձերու կը վերաբերի, ըստ դատաւարական օրինադրքին արամադրութեան, որոշուեցաւ միացնել ամէնն ալ, եւ նոյն օրինադրքին համեմատ, բանախն հանուելով վերոյիշեալ ամբաստանեալք բերուեցան դատարանի առջեւ 1 Մայիս 1309ին, ուր սկսաւ իրենց հարցաքնննութիւնն եւ դատաստանը: Կոտաջարկուի իրենց, որ իւրաքանչիւրը փաստարան մը նշանակէ որպէսզի օգնէ իր պաշտպանութեան առեմն, միայն թուժական կտրատու, Գանայեան Յովհաննէս, Աւագեան Գէորգ, Սինան Օղլու Արչալ, Շահինեան կտրապետ, Մամաս Դանիէլ քահանայ փոխանորդներ կը կարգեն, իսկ միւսները փաստարան չունենալնին կը յայտնեն, եւ որովհետեւ հասկցուած էր որ ամբաստանեալներէն մէկ քանին ուրիշ մէկ քանիներու մասին տեղեկութիւններ տուած էին: Դատարանն ի պաշտօնէ Անտոն Ռըտտենիի, Մուշուի, Պաշատուրի եւ Նահապետի փաստարան նշանակեց Գէորգ Աւագեան – Իգարեան Յովհաննէս, Պետրոսի, Սահակի եւ Սուրբիկ կնոջ ալ՝ Ապաճեան Մամաս, եւ փաստարան Արսէն՝ Կիւլպէնկի, Արթինի, Դանիէլի, Տապալ Օղլու Յակոբի ալ՝ Եողղատցի Պէքլըր – Տերոս Օղլու Յովհաննէսի, Արզուման Օղլու Յովհաննէսի, Գրիգորի, Կարոյի, Յակոբի եւ Աւետիսի ալ՝ Իզգէթ էֆ. – իսկ միւս մնացածներուն ալ՝ Լազարաքի:

Նոյնպէս ստորագրել տրուեցաւ իրենց ատենագրութիւն մը, ուր նշանակուած է թէ ամբաստանեալք հրաւիրուած են ընել առարկութիւննին, եթէ ունին ամբաստանգրին օրինականութեանը դէմ:

Յետոյ, Գարա Բարսեղ Օղլու Արթին, Աշճի Բարսեղ Օղլու Կիւլպէնկի, Տապալ Օղլու Յակոբ, աղերսագրով մը դանդաղաժ ըլլալով թէ իրենց փաստարանը, Պէքլըր էֆ. անվոյթ է իր պարտականութիւնը կատարելու, եւ որովհետեւ Եողղատը Սենեքերիմ, Հաճի քէօյլի Սերգիս, Ատիրեան Ղազարոս, Աթէշ Օղլու Միքէ, խնդրագրով մը Մամաս էֆ. եւ թորոս Տարուքեան ալ Շամլեան Արթին էֆէնտի փաստարան կարգած էին, վերոյիշեալք վերստին բանախն հանուելով բերուեցան դատարանի առջեւ եւ իրենց այս անուանումները արձանագրուեցան:

Ամբաստանագրին դէմ առարկութիւն ընելու իրաւունքին յատկացեալ հինգ օրը լրանալէ ետքը, դատաստանը կը սկսի 8 Մայիս Շարաթ օրը:

\*\*

Որոշուած օրը, ամբաստանեալները կը բերուին դատարան: Քովերնին կը կենան փաստարաններնին, Աւագեան Գէորգ, Շահինեան կտրապետ, Ապաճեան Մամաս, Իզգէթ, Շամլեան, Արթին Աղիգեան, Նազըմ, Նազարէթ, Չէչէեան Յակոբ եւ Լազարաքի էֆէնտիներ: Ընդհանուր դատախազն է Մէհմէտ Արիֆ պէյ. հարցաքննութեան սկսելով, կ'իմացուի որ,

Ռուբէն Ճէվահիրճեան 25 տարեկան է, արհեստն է մեքենագործութիւն եւ կաշեգործութիւն:

Անտոն Ռըտտենի 43 տարեկան է, նախկին օրագրող եւ Եղիպտոս՝ Ալեքսանդրիա բնակող:

Բարսեղ Տէօքմէճեան, 27 տարեկան, վաճառական ի Կեսարիա:

Յակոբ Ճէպիտէլիքեան, 27 տարեկան, փերեզակ ի Կեսարիա:

Կտրապետ Ալաճարճեան, 29 տարեկան, արհեստաւոր:

Բարսեղ Դանիէլ քահանայ, 43 տարեկան:

Յովհաննէս Արզումանեան, 26 տարեկան, գալըպճի :  
 Գարա Բարսեղեան, 20 տարեկան, ոստայնանկ :  
 Մամաս Օհան Օղլու, 20 տարեկան, կերպասավաճառ :  
 Բարսեղ Օղլու Կիւլպէնկ, 18 տարեկան, կահադործ :  
 Գարաքիւլաս Օղլու Գէորգ, 19 տարեկան, Տիրեվէնք վանքին մէջ սպա-  
 սաւոր :  
 Աւետիս, 19 տարեկան, նոյն վանքի սպասաւոր :  
 Կարօ, 23 տարեկան, ուսուցիչ Թալասի հայ վարժարանին :  
 Յակոբ Տապաղեան, 47 տարեկան, Թալասի մէջ ժամադործ :  
 Սիմոն Օղլու Արթին, 51 տարեկան, ջորեպան :  
 Կարապետ, 33 տարեկան, Թալասի նամակատան ցրուիչ :  
 Արսէն, 33 տարեկան, փաստաբան :  
 Շաւարշ, 33 տարեկան, Թալասի հայ վարժարանի մէջ ուսուցիչ :  
 Ճիւլանեան, Մարգուանի վարժարանէ շրջանաւարտ :  
 Ստեփան Պօյաճեան, 23 տարեկան, չըրճի :  
 Պատուպէլի Մարտիրոս, 43 տարեկան, քարոզիչ :  
 Կիւրքինցի Թորոս, 22 տարեկան, չըրճի :  
 Կարապետ Թումայեան, 40 տարեկան, Մարգուանի Գողթնի ուսուցիչ :  
 Յովհաննէս Գաեայեան, 28 տարեկան, ուսուցիչ նոյն Գողթնին :  
 Հաճի Քէօյլիա Ուզուն Օղլու, 20 տարեկան, արհեստաւոր :  
 Հաճի Քէօյլիա Միտիլ Օղլու Սերգիս, 30 տարեկան, արհեստաւոր :  
 Երզուար Փանոս, 30 տարեկան, երկաթադործ :  
 Թորոս Օղլու Միրիճան, 21 տարեկան, ատաղձագործ :  
 Պետրոս Օղլու Միսաք, 22 տարեկան, կառապան :  
 Չոլաքեան Յակոբ, 22 տարեկան, կօշկակար :  
 Գիրգոր, 38 տարեկան, կնիք փորագրող :  
 Մուշու, 25 տարեկան, Փէսի գալըպճի :  
 Քէչէճեան Միսաք, 32 տարեկան, լուսանկարիչ :  
 Արդարեան Յովհաննէս, 32 տարեկան, վաճառական :  
 Սէնէքերիմ Քէպէճեան, 24 տարեկան, Եողղատի հայ վարժարանի ու-  
 սուցիչ :  
 Աթէշ Օղլու Միքէ, 19 տարեկան, սպասաւոր :  
 Փափաղեան Մկրտիչ, 25 տարեկան, չըրճի :  
 Նահապետեան Նահապետ, 22 տարեկան, կտաւավաճառ :  
 Գարակէօղեան Յարութիւն, 21 տարեկան :  
 Վատուր Օղլու Ղազարոս, 24 տարեկան, չըրճի :  
 Վարդան Օղլու Միհրան, 27 տարեկան, փերեզակ :  
 Յակոբ Տօլունեան, 44 տարեկան :  
 Գարբիէլ, 24 տարեկան, կօշկակար :  
 Սուրբիկ Գատրն, 26 տարեկան, էվէրէկցի :  
 Մինան Օղլու Արշակ, 21 տարեկան, էվէրէկցի :  
 Տայի Օղլու Առաքել, 13 տարեկան, էվէրէկի հայ վրժի աշակերտ :  
 Սահաթճի Օղլու Խաչատուր, 41 տարեկան, սափրիչ :  
 Ճէնուն Օղլու Սահակ, 17 տարեկան, արհեստաւոր :  
 Թին Օղլու Պետրոս, 21 տարեկան, արհեստաւոր :  
 Այս կէտերուն քննութենէն ետքը, դատարանը կ'անցնի ուրիշ խնդիր-  
 ներու եւ տեսնելով որ ամբաստանեալներու մէկ քանիին չէ հաղորդուած

ամբաստանիչ Ատեանի ոչ մտղաթային, ոչ ամբաստանագրին վաւերական օրինակները, եւ թէ իրենք ալ դատարանին բանտը չեն փոխադրուած, պարտ ու պատշաճը տնօրինելու համար Կեսարիայի եւ Եոզղատի ընդհանուր դատախազութեան կը գրուի, եւ սակայն որովհետեւ այդ կարգի ամբաստանեալներուն եկած չըլլալը չկրնար արգելք մը ըլլալ միւսներուն պատասխանին, ընդհանուր դատախազը անոնց դատուիլը կը պահանջէ իր զիտողագրովը:

Նոյնպէս կը պահանջէր ամբաստանեալ Կրոնիկ Փափազեանի դատաստանին միւսներէն դատուիլը եւ յետաձուլուիլը, ըստ որում, բանտին տեսչութիւնը յայտարարած ըլլալով թէ Կրոնիկի խելքին խանդարում եկած ըլլալով, հարկ էր զինքը բանտէն արձակել եւ դարմանելու համար յիմարանոց գրկել, եւ թէ ասոր վրայ, Էնկիւրիի առողջապահական գործոց քննիչն ու քաղաքային բժիշկը դէպքը սուղած ըլլալով, հարկ կը մնար յետաձգել իր դատաստանը մինչեւ որ ապաքինի: Նոյն պաշտօնէութեան կողմէ 7 Մայիս թուականով տրուած միւղաքէրէն կարգացուեցաւ, որոյ իմաստն էր, թէ ամբաստանեալներէն մէկ քանիին բայակայ ըլլալը չկրնար, ըստ օրինի, սխառած մը նկատուիլ ուրիշ օրուան ձգելու համար ներկաներուն դատաստանը, պէտք էր, այս պատճառաւ, սկսիլ ներկայ եղողներուն դատը: Դատարանն ալ այս մտօք միւսմայնութեամբ վճիռ տուաւ: Ասկէ ետքը կարգացուեցաւ ամբաստանագրին, որ ահաւասիկ.

\*\*

Նախ եւ առաջ Թալաս գիւղին մէջ յեղափոխական ընկերութիւն կազմողն եղաւ վախճանեալ Արար Օղլու Սերգիս: Քերթման Կարօ եւս սոյն ընկերութեան տետրակները կը պատրաստէր, կը գրէր, եւ անուննին արձանագրուած անձերը յորդորելով ընկերութեան անդամ կ'ընէր զանոնք, որոնց կը կարգար կանոնադիրը: Պաղեան Յակօր եւ Սիմօղ Օղլու Արթին աւագակութեամբ կը պարապին: Որպէսզի ընկերութեան անդամները զիրար ճանչնան, պէխերնին ոլորել, ձեռուրնին ականջնին տանիլ, կամ երեսնուն վրայ բռնել, այս տեսակ նշաններ մէջերին հաստատած են: Ընկերութեան անդամներէն հաւաքուած դրամները յատկացեալ են նախ եւ առաջ Մարթինի եւ Վինչէսթերի հրացաններ գնելու, եւ այդ հրացանէն՝ զնդակներովը միատեղ, Եազուպ Օղլու Փանոսին տրուած է: Քերթման Օղլու Կարօ եւ Տապախեան Յակօր, Կարնեցի Կարապետ, առաւել կամ նուազ բացորոշ կերպով յայտարարած են թէ Քեահիա Օղլու Ռուբէնի տունը հաւաքուելով, մէջտեղ ապրանք բերած են, որպէսզի ծախուելով գինը յատկացուի զէնք եւ այլ հրանիւթեր գնելու, եւ այս ամէնը չեն իմաց տուած:

Ասկէ երկուք ու կէս տարի առաջ ալ, Կեսարիայի մէջ այս յեղափոխական ընկերութեան ճիւղ մը հաստատեց բողոքական դպրոցին դասատուներէն Կիւրպէնիկեան Տիգրան, որուն նոյնութիւնն ու բնակութեան տեղն այսօր անձանօթ է, ընկերակցութեամբ Ատանայի քարոզիչին Աղէքսանդր գաւկին հետ: Ասոնք Կեսարիայի մէջ Փափազեան Քերովթէ, Ալաճաճեան Կարապետ, Ճէպիտէլիքեան Յակօր, Ճէվահիրճեան Ռուբէն եւ Տէօքմէճեան Բարսեղը ընկերութեան մէջ մտցուցին:

Անցեալ 1309 տարուայ Սեպտեմբերին սկիզբը, Մարզումնի մէջ է նիստ գումարուած յեղափոխական ժողովը յայտարարեց Կեսարիայի ընկերութեան, որ Կեսարիայէն երեսփոխան մը զրկուի Մարզումն: Կեսարիայէն ալ

Արդուման Օղլու Յովհաննէս երեսփոխան կը զրկուի, որուն ճամբու ծախքը եղած եօթը մէծիտիէն կը վճարուի անդամներու կողմէ ընկերութեան իբրև բուռք եւ ամսական արուած դումարներու վրայէն, որք յատկացեալ են ընկերութեան վնասակար նպատակն ի դործ դնելու: Հոն, Մարգուանի մէջ սոյն յեղափոխական ընկերութիւնը ժողովք ընելով, խորհրդակցութիւններէ կաքը, կ'որոշուին նենդամիտ միջոցներ, որոնք դրուած են իբր ապացոյց ծառայելիք կարգ մը թղթերու միտն վրայ:

Այս թղթին պարունակութեանը նայելով, Մարգուանի մէջ հիմնուած ընկերութեան մարմինը կը կազմեն Մարգուանի մէջ Պ. Մինէ, Պ. Վահրամ, Սերասախայէն Պ. Արծրունի, Թողատէն Բութիբի, Ամասխայէն Պ. Աշոտ, Եողղատէն Պ. Ֆապրիճ, Կեսարիայէն Պ. Բանտօ, Չորումէն Գայսէր եւ Սունդուրլուէն Պ. Սերոբ Հաճի եւ Պ. Վիչէն, կեղծ անուններու ներքեւ ծածկուած անձեր, որոնց նախագահն էր Թումայեան Կարապետ եւ քարտուղար Գաեայեան Ճիվան, ուրիշ անուամբ, Յովհաննէս: Ասոնք Պիլաքեսեցի Քերովբէ Պայասեանը ուղարկելով, թէ ասոր եւ թէ յետոյ Քիրմիրլի Տիրոս Օղլու Կոտայրան Յովհաննէսի եւ Օնան Օղլու Մամասի եւ անձանոթ մի քանի ուրիշ ջորեպաններու ձեռք տղեալ ընկերութեան կանոնադրներ եւ «Հնչակ» լրագրի թիւերը կը ստանային եւ կը կարդային: Մարգուանի ընկերութեան նախագահ Թումայեան Կարապետէ, կեղծ անուն Մինէ, եւ քարտուղար, Գաեայեան Ճիվանէ, կեղծ անուն Յովհաննէս, թերթեր եկած, բայց այրած ըլլալին խոստովանած են: Թղթերուն իբր պատասխան ըսուած է թէ Կեսարիայի մէջ եւ չրջակաները մօտաւորապէս երկու հարիւր հոգի ընկերութեան անդամակցած կը գտնուին:

Թէ ասոնցմէ ոմանք հին պէնքերով, ոմանք ալ բեօլլիբերնելով սպառադինեալ են եւ սրպէսօլի այս ամենուն կազմակերպութիւն մը տրուի, մասնաոր պաշտօնեայ մը ինդրած են: Ասկէ յետոյ ստացուած նամակի մը մէջ, ըսուած է թէ տինամիթ վառօղով լեցուած ումբերտուն իւրաքանչիւրը կ'արմէ 25 դրուշ արծաթ, եւ թէ դէնք կ'ուզուի Հոկտեմբերի սկիզբէն դրամ պիտի զրկուի աղապրանքներու համար: Թէպէտ եւ այս ամէնն ըսուած է բայց Կեսարիայէն ինդրուած կազմակերպիչ պաշտօնեան մինչեւ այն ժամանակը հոն ժամանած չլլալուն, եւ անոր հասնելուն սպասելուն, սոյն նամակին պատասխան տուած չեն:

Սեպտեմբերի սկիզբը Մարգուանէն եկած վճիռը, կանոնադիրը եւ «Հնչակ»ի թիւերը կարդալու համար քաղքէն դուրս գտնուած միջոցնուն, ընկերութեան կողմէ պաշտօնեայ մը եկած է: Տիրեվէնք վանքին Տ. Դանիէլ քահանան՝ Արդուման Օղլու Յովհաննէսով լուր կը զրկէ Կեսարիա, եւ Տէօքմէճեան Բարսեղ Տիրեվէնք վանքը կը զրկուի:

Սոյն քահանան վկայած ըլլալով թէ Բարսեղ վատահելի անձ մըն է, մերոյիչեալ ընկերութեան պաշտօնեան կը տեսակցի Բարսեղի հետ, անոր ցոյց կու տայ վկայագիր մը, որուն մէջ գրուած էր թէ Հնչակի յեղափոխական խմբին կողմէ ուղարկուած էր Ատանա:

... Անոնք պատմեր են թէ նպատակ ունենալով զարնել աղահանքին թղթատարը, անոնց անցնելիք ճամբուն վրայ սպասեր են Ներէգէլի Պողոսի հետ, թէ Միսաք հեծած է Աշճը Բարսեղ Օղլու Կիւլպէնիի ձիուն վրայ, թէ առջեւէն եկող դէտին պայուսակները փաթթուած ըլլալով՝ կարծեր են թէ դրամները անոր քով են եւ վրան յարձակելով ձերբակալեր են, թէ ետեւէն Եկող միւս դէտը փախեր է, թէ ձերբակալեալ դէտին ձին ու պայուսակներն

առեր են, թէ ստոր քով ստակ չէ դանուեր եւ ստակը՝ փախչող զէտին քովն է եղեր եւ թէ ձերբակալեալ զէտին ալ սուեր են Մխաբի հեծած ձին, որ Կիւլպէնկիինն էր: Անտոն Ռշտունին ըսեր էր թէ լաւ բան մը չեն ըրած, թէ դործը ձիէն երեւան կ'ելլէ, Կիւլպէնկի պատմածին վրայ ինք գրած էր անոր կենսագրութիւնը, թէ կառասպանը խեղդամահ ըրեր են, թէ Մարգուանի խռովարարական ընկերութեան հրամանաւ Մատէնի թղթատարը զարկեր են, թէ Օսմանճըզի թղթատարին վրայ յարձակելով ցոյց մը ըրած են եւ թէ Մարգուանի ու Չորումի մէջտեղ դանուած տարպանտի ոստիկան – զինուորը սպաններ են Մարթինի հրացանով: Ըսած էր նաեւ թէ Օսմանճըզի թղթատարին վրայ յարձակելու համար Կիւրիինլի Թորոսի հետ դացեր էր: Կիւլպէնկի, միշտ Թորոսի հետ կը պտտէր: Կիւլպէնկի ուզեր է զէտին տրուած ձիուն տեղ անկից առնուելով վանք բերուած ձին առնել, սակայն սպաննելու սպառնալիք ըրած ըլլալով չէ կրցեր առնել ու մեկներ է: Յետոյ ինք այդ ձին վանքէն Մանճըսըն զրկեր է:

Հարցուեցաւ Դանիէլ վարդապետի թէ ինչ պիտի ըսէր: Պատասխանեց թէ, ինչպէս որ նախապէս ըսած էր, հարցաքննութեան պահուն իր ըրած յայտարարութիւնը բանութեամբ առնուած էին, հետեւարար բնաւ չէր ընդուներ:

Անտոն Ռշտունի դատարան բերուեցաւ եւ հարցաքննուելով ըսաւ թէ ինք սեւէ առաջարկ մը ըրած չէր Կիւլպէնկիին՝ խումբէն ամսաթոշակ կամ վարձատրութիւն մը առնել տալու համար: Գիշեր մը ինք պառկած ատեն տեսեր է թէ Կիւլպէնկի բան մը կ'ըսէ Դանիէլ վարդապետին, որ դրի կ'առնէր ըստածները, եւ թէ քնանալու վրայ ըլլալով չէ կրցած իմանալ թէ ինչ կ'ըսէ եւ ինչ կը դրէ, սակայն հետեւեալ օրը Դանիէլ վարդապետ գրած թուղթը կարդացեր է իրեն եւ այն ատեն հասկցեր է թէ Կիւլպէնկի կենսագրութիւնն է: Իրեն Չոմաքլու երթալու օրը վարդապետն ըսեր է, որ Մխաբ, Փանոս ու Նիրզէլի Պօղոս թղթատարը զարկեր են, յանձնարարեր է, որ այն օրը չերթայ: Ինք ալ ուղեւորութիւնը յետաձգելով հետեւեալ օրը Փանոսի հետ դացեր են:

Հարցուեցաւ Դանիէլ վարդապետի, Կիւլպէնկի եւ Մխաբի թէ ի՞նչ պիտի ըսէին Ռշտունիի այս յայտարարութեանց դէմ: Ասոնք պնդեցին իրենց նախորդ պատասխաններուն վրայ: Փանոս ալ ըսաւ թէ Ռշտունին ինք փախուցած ըլլալով՝ անոնց ըսածները չընդունիր:

Կիւրիինցի Մառուկեան Թորոս հարցաքննուելով ըսաւ թէ Հայոց յեղափոխական ընկերութեան ո՛չ մասնակցած է եւ ոչ ալ տեղեկութիւն ունի, թէ ինք Թումայեան Արթինի կողմէ ահաբեկիչ պաշտօնեայ կարգուած չէ, թէ մէկ սակիի փոխարէն անկից ծրար մը առնելով մէջը դանուած ազգերը ժիրայրի տարած չէ, թէ Օսմանճըզի թղթատարին վրայ Կիւլպէնկի հետ յարձակած չէ, թէ Չորումի ոստիկան-զինուորը սպաննած չէ, թէ ո՛չ Մատէնի թղթատարը զարկած եւ ոչ ալ սուրհանդակն ու ոստիկան-զինուորը սպաննած է: Թորոս այս պարագաներն ուրանալով ըսաւ թէ ինք վաճառականութեամբ կը զբաղի, թէ ոչ մարդէ ստակ առնող եւ ոչ ալ ստակով այդ տեսակ աւազակութիւն գործող մարդերէն է:

Գրաւոր հարցաքննութեան մէջ իր տուած պատասխաններուն դիմուելով տեսնուեցաւ թէ իր հարցաքննուելու թուականէն ինն ամիս առաջ արմտիք ձախելու համար Մարգուան դացեր է, հոն Թումայեան Կարապետի եղբայրն Արթին տոպրակ մը թուղթ տուեր է իրեն ի Կեմերէկ ժիրայրի յանձնելու

համար, իրրեւ վարձք ոսկի մըն ալ տալով: Նոյնպէս վկայական մը յանձներ է թէ վստահելի անձ մըն է եւ իրեն աջակցութիւն ըլլալու է: Այդ ստպրակը կեմերէկ տանելով յանձներ է ժիրայր ըսուած անձին:

Ուրիշ անգամ մը ըրած յայտարարութեամբ ըսած է թէ ի Մարգուան թումայեան Արթինի հետ տեսնուելուն, այս վերջինն ըսեր է իրեն թէ Հայաստանի անկախութեան համար ընկերութիւն մը կայ, թէ ինք նոյն ընկերութեան գործադիր պաշտօնեայ կարգուած է, թէ ընկերութեան անուանը եղած թուղթերն եւ այլն իրեն միջոցաւ պիտի ղրկուին եւ թէ վկայական մը պիտի տրուի իրեն՝ իր պաշտօնին հանգամանքներուն նկատմամբ, ինչպէս նաեւ ի հարկին իրեն աջակցութիւն տրուելու եւ ընկերութեան անդամ ըլլալը պիտոյնուելու համար: Ինք ըստ այնմ ընդուներ եւ ստացեր է ընկերութեան կնիքով կնքեալ վկայագիրը:

Տրուած թուղթերը ժիրայրի յանձնելէ յետոյ իրեն յանձնուած պաշտօնը վտանդաւոր ըլլալով այլեւս իր գործովն զբաղեր է: Վնասակար գրութիւններու համար խուզարկութիւններ կատարուած պահուն, վախէն այդ վկայականը պատուեր է: Գործադիր պաշտօնեայ կարգուած ատեն իրեն յանձնուած հրահանգը սխալմամբ ժիրայրի տուեր է:

Երբորդ անգամու յայտարարութեամբ ալ ըսած է թէ վերոյիշեալ թումայեան Արթինի հետ երբ ի Մարգուան տեսակցեցան եւ ընկերութեան գործադիր պաշտօնեայ կարգուեցաւ, Արթին ըսեր է իրեն թէ իր պարտականութիւնն է կամ յաղթել եւ կամ մեռնիլ եւ թէ ասկից վերջը, ո՛րչափ որ կարող ըլլայ պէտք էր տէրութեան թղթատարին վրայ յարձակելով օգուտ մը ձեռք բերէ ընկերութեան: Անկից ելլելով Կեսարիոյ շրջակայ Ս. Կարապետի վանքին մէջ գտեր է Թալասցի Աշճը Բարսեղ Օղլու Կիւլպէնկը, եւ անոր առաջարկեր է թղթատարներու վրայ յարձակելու համար իր ունեցած դիտաւորութիւնը, եւ Կիւլպէնկ ալ ընդուներ է: Անոր հետ միանալով ուղղակի Մատէնի թղթատարին ճամբուն վրայ գացեր են եւ տեսնելով, որ սուրհանդակն ու ոստիկան-գինուորը Մատէնէն երեք ժամ հեռաւորութեամբ դէպի Շողլատ կ'երթան՝ վրանին յարձակեր եւ ազդարարեր են որ անձնատուր ըլլան. սուրհանդակն ու ոստիկան-գինուորը անձնատուր ըլլալով իրենք ալ ճամբէն ելեր եւ երկուքն ալ կրակ ընելով սուրհանդակին ու ոստիկան-գինուորին վրայ զարկեր են զանոնք: Թղթատարի պայուսակին մէջ գտնուած 170-ի չափ մէծ ճիւղիչներն ու ոսկիները առնելով երեսուն ոսկին Կիւլպէնկի տուեր եւ մնացեալներն ալ ինք առեր է, սակայն ընկերութեան չէ զրկեր: Իրեն քով ոռոսական Մարթինի հրացան կը գտնուի եղեր եւ ընկերոջը Կիւլպէնկի քով վեցհարուածեան ատրճանակ մը: Իր վրայ բալթօ մը կար եւ գլուխը լաթ մը փաթթած էր. Կիւլպէնկ ալ եամճը մը հագած եւ նոյնպէս գլուխը լաթ մը փաթթած էր:

Հարցուեցաւ թէ իր այս յայտարարութեան դէմ ի՞նչ պիտի ըսէր: Թորոս ըսաւ թէ հարցաքննութեանց տեղեկագրերու տակ գտնուած ստորագրութիւնն իրն էր սակայն բռնութեամբ ըսել տուած էին իրեն, ուստի յարեց թէ չընդունիր եւ պնդեց իր ուրացմանը վրայ:

Արդրման Օղլու Յովհաննէս կրկին անգամ հարցաքննուելով ըսաւ թէ ազդերը փակցնելէ յետոյ Տիրեվէնքի վանքը փախեր եւ անկից ալ Գարատէրէ անուն տեղը գտնուած այգիները գացեր է, թէ էսկիշէհիւրի կողմերը բնաւ չէ գացած, թէ ոստիկան-գինուորք զինքը Սուլթան Խանի մէջ ձերբակալած էին եւ դրաւած էին վրան գտնուած քսանի չափ փամփուշտներն եւ սպիտակ ու-

կորէ բունով ընկալուի: Յովհաննէս ըսաւ թէ Չառու Օղլու Մուսթաֆայի սպանութենէն ընաւ տեղեկութիւն չունէր:

\*\*

Ասոր վրայ ընդհ. դատախազ Արիֆ պէյ պահանջեց բերել տալ եւ լսել այն վկաներն, որոնց անուները նշանակուած էին նախապէս իրեն կողմէ յանձնուած ցուցակի մը մէջ: Այս պահանջումը օրինաւոր դատուելով որոշուեցաւ կողքի եւ լսել վկաները, որոնց անունը նշանակուած է նոյն ցանկին մէջ: Այդ անձինք են. Աֆըէրեցի Ձէրքէր Օղլու Միհրան Նոճա, Տատրեան Կարապետ, Գայսէր Օղլու Մանուկ, Աֆըէրեցի Գուլումճեան Միքայէլ, Ստեփան, Գայսէրի Մարտիրոս Օղլու Հաճի, Թիմուրճու Օղլու Թուղճու Յակոբ, Չառու Օղլու Միսաք, Քէրէստէճեան Աղարեկ, Գասապ Օղլու Տիգրան, Գայսէրի Նէվէշէհրիեան Նազարէթ, Եաղուպ Օղլու ձիւրաիլ, Առաքելեան Մկրտիչ, Պէրպէրեան Կարապետ, Ճէվահիրեան Սարգիս, Կէօնիշ Օղլու Արթին, Մարաշը Սարգիս Օղլու Նաչեր, Աթմանլը Աշիբէթէն Մէհմէտ աղա Օղլու Քիւրա Իպրահիմ, Հանլը Օղլու Արթին, Եաղուպ Օղլու Հաճի, Աւետիս Մազսուտեան, Սոմայեան Կարապետ, Այվազ Օղլու Տիգրան, Տէվէլուեան Սարրաֆ Միհրան, Գըյէ Օղլու Աբրահամ, Կիւրիւնլի Շալճը Յակոբ, Հանրային Պարտքի Վարչութեան դէտերէն Գայսէրի Կիւլէճի Օղլու Ալի, Հաճի Օղլու Մուսթաֆա, սպանեալ Մուսթաֆայի քեռայրը, Սէյտ Մէհմէտ, նոյն Մուսթաֆայի աներորդի՝ Մէհմէտ Չառու, Գայսէրի Ահմէտ Միլազիմ Օղլու Շապան, Կեսարիոյ հեծեալ սասիկան-զինուորներէն Հաճի Իպրահիմ աղա ու Նամուրքեար Օղլու Ալի, Բաիճ Օղլու Նալիլ, Էնկիւրիէն Պանտրմայի գաղթական Մուսթաֆա Օղլու Միւլէյման, կառապան Համդա, Նանճը Մէհմէտ Ալի, Նանճը Հաֆըզ աղա, Նահուէճի Ալի աղա, Պրուսացի կառապան Սարը Ահմէտ, կառապան Բէճէպ, Տէվէրլուէն Ղազարոս Օղլու Նարիթոն, Հէքիմ Օղլու Սարգիս, Կեմերէկցի Ազմալ Օղլու Համբար, Չորուճի Տէրագամ Օղլու Ասատուր, Ձիւլամ Օղլու Գարլօ, Մարգուանցի Պուրճլու Օղլու Մկրտիչ, Քէթէվրէեան Կարապետ եւ Քիւրքճի Օղլու Հայրապետ: Նոյնպէս որոշուեցաւ կողքի եւ լսել անհատական իրաւանց դատախազներն որք են սպանեալ Մուսթաֆայի հայրը՝ Մէհմէտ Չառու եւ Հանրային Պարտուց Վարչութեան դէտերէն Իզզէթ: Այս որոշումները հաղորդուելով ամբաստանեալք բանտ վերադարձուեցան:

18 Մայիս, 1309

Նախագահ՝ Հիւսէյնիմ-Հիւսնի

Քարտուղար՝ Քամիս, Անդամֆ՝ Ալի, Թէվֆիք, Օննիկ, Երկի

... Կարգ մը վկայութիւններէ յետոյ՝ վկայ Կիւրիւնցի Շալճը Յակոբ ըսաւ թէ հօրը անունը Յովհաննէս է, 36 տարեկան, արհեստով շալճը, ամբաստանելոց հետ ազգականութիւն ու յարաբերութիւն չունի, Քէրթման Օղլու Գարոն, Տապաղեան ժամազորճ Յակոբն եւ Կիւրիւնլի Կարապետն առաջուկ կը ճանչնայ: Օրինական երգումը ընելէ յետոյ ըսաւ. երկու տարի առաջ Տապաղեան Յակոբի, Կիւրիւնեան Կարապետի եւ Գարոյի հրաւիրանօք եւ Ատանացի Գէորգի միջոցաւ ասոնցմէ Յակոբի տունը դացեր է: Հոն վերոյիշեալ անձինք ներկայ էին եւ ըսեր են իրեն, որ հայ ըլլալը ապացուցանելու համար ստորագրութիւն մը տայ: Ինք թէեւ մերժել ուզեր է, սակայն բռնութեամբ ստորագրութիւն դնել տուեր են: Տետրակի նման լսան մը կարդացեր են, բայց



ի՛նչ ըլլալը չէր կրցեր հասկնալ: Հայկական ընկերութեան համար երկու մէ-  
ծիտից ուզեր են եւ ինք ստակ չունենալով չէ կրցեր տալ: Յետոյ Յակոբին  
ստորագրութեամբ եւ տասնապետի անունով Սարգիս եկեր եւ իրմէ ստակ ու-  
ղեր է, ըսելով որ եթէ չտայ բռնութիւն պիտի բանեցնէ: Գարօ ձեռքը եղած  
թուղթ մը կարդալով ըսեր է, թէ իրենց նպատակն է հայկական իշխանապե-  
տութիւն մը կազմակերպելու համար կայս. կառավարութեան դէմ սպասամ-  
բիլ եւ պատուիրեր է ընկերութեան անդամներուն, որ այդ նպատակով հա-  
ւաքեալ գրամով գէնք անեն: Միանգամայն որոշած են, որ մէկ երկու տար-  
ուան մէջ օսմանեան տէրութիւնն եթէ պատերազմ մը ունենայ օտար տէրու-  
թիւններէ մէկուն հետ եւ պահեստի զօրքերը ի գէն կոչուին, յեղափոխական  
ընկերութեան անդամներն ալ պատրաստուած գէնքերով դիւղաքաղաքներն ու  
դիւղերը կոխեն: Թալասի ընկերութեան նախագահն է Տապաղեան ժամա-  
զործ Յակոբ, Քէրթման Օղլու Գարօ՝ քարտուղար եւ Կիւրինլի Կարապետն ալ  
զլխաւորներէն է: Ընկերութեան կանոնները կը տրամադրեն աւազակութիւն  
եւ այլ ոճիւրներ զործող յեղափոխական ընկերութեան անդամոց ի նպաստ  
վկայութիւն տալու համար նոյն ընկերութեան անդամներէն սուտ վկաներ  
պատրաստել եւ այսպէս զիրար աղաւել բանտարկութենէ ու օրինական պա-  
տիժներէ: Այս պարազաները ժամանակին իմաց տուեր է ի Կեսարիա Քիււր-  
քիւլ Օղլու Մէհմէտ աղայի ու Տէրվիչ աղայի: Իր այս՝ յայտարարութիւնք  
համապատասխան էին հարցաքննիչ դատաւորին առջեւ ըսածներուն: Գարօ,  
Յակոբ ու Կարապետ հարցման մը պատասխանելով յայտնեցին թէ այդ ըս-  
ուածները չեն ընդունիր:

... Նկատելով որ Կիւրինցի Ծառուկեան Թորոս հարցաքննիչ դատա-  
ւորին առջեւ խոստովանած է թէ արմտիք ծախելու համար ասկից առաջ  
Մարզուան երթալուն Թումայեան Կարապետի եղբօր՝ Թումայեան Արթինի  
կողմէ տուրակ մը թուղթ եւ ոսկի մը ստացեր է ի Կեմերէկ Ժիրայրի տրուե-  
լու համար, թէ ըստ այնմ այդ իրեն տրուածները յանձնարարուած տեղը  
յանձներ է, թէ Թումայեան Արթինի հետ ի Մարզուան տեսակցելուն, ըսեր է  
իրեն որ Հայաստանի անկախութեան համար ընկերութիւն մը կազմուած է,  
ինք այդ ընկերութեան գործադիր պաշտօնեայ կարգուած է եւ ընկերութեան  
անուանը եղած գրութիւններ եւայն իրեն ձեռքովը պիտի դրկուին, թէ Արթին  
իրեն տուեր է վկայական մը ընկերութեան կնիքով կնքուած, որ իր պաշտօնը  
կը սահմանէր եւ ի հարկին իրեն օգնութիւն պիտի ըլլար, թէ այդ վկայականն  
ստացեր է, թէ տրուած թուղթերը Ժիրայրի յանձնելէ յետոյ, տեսնելով որ  
մասնագաւոր ծառայութիւն մըն է՝ իր զործովն զբաղեր է, թէ հոս հոն վնա-  
կար թուղթեր խուզարկուած պահուն, վախէն պատեր է այդ վկայականը,  
թէ գործադիր պաշտօնեայ կարգուած ատեն իրեն տրուած վկայականը սխալ-  
մամբ Ժիրայրի տուեր է, թէ ի Մարզուան Թումայեան Արթինի հետ տեսնուած  
ու ընկերութեան գործադիր պաշտօնեայ եղած ատեն, Արթին ըսեր է իրեն,  
որ իր պարտքը կ'մ քաջագործութիւն է եւ կամ մահ եւ ասկից յետոյ որչափ  
որ կարենայ՝ տէրութեան թղթատարին վրայ յարձակելով ընկերութեան  
օգուտ մը ընծայէ, թէ անկից ելլելով Կեսարիոյ շրջակայ Ս. Կարապետի վան-  
քին մէջ գտեր է Թալասցի Աշճը Բարսեղ Օղլու Կիււլպէնկը, որուն հաղորդեր է  
թղթատար զարնելու համար իր ունեցած դիտաւորութիւնը եւ Կիււլպէնկ ալ  
համակերպեր է, թէ անկից միասին դացեր են Մատէնի թղթատարին անցնելիք  
ճամբան, թէ տեսնելով որ Մատէնէն երեք ժամ հեռաւորութեամբ թղթատարը  
Նոզղատ կ'երթայ, անմիջապէս յարձակեր են պահապան ոստիկան-գինուորին

ու սուբհանդակին վրայ եւ հրաւիրեր են որ անձնատուր ըլլան, թէ ոստիկան-  
զինուորն ու սուբհանդակը անձնատուր ըլլալով, զանոնք ճամբէն հաներ ու  
երկուքն ալ սպաններ են, թէ թղթատարին ունեցած հարիւր եօթանասունի  
չափ մէծ խոյններն ու սակիները կողոպտելով, երեսուն սակին կիւլպէնկի  
տուեր եւ մնացածներն ալ ինք առեր ու ընկերութեան չէ զրկեր եւ թէ ինք  
ուսական մարթինի հրացան մը ունի եղեր եւ բայթօ մը հագած ու զլուխը  
ծածկած, իսկ կիւլպէնկի ալ վեց հարուածեան տարճանակ մը եւ համճը մը  
հագած ու զլուխը ծածկուած, նկատելով որ թորոս դատարանին առջեւ ու-  
գած է ճշմարտութիւնը ծածկել եւ ուրանալ:

Նկատելով որ Աշճը Օղլը կիւլպէնկի հարցաքննիչ դատաւորին առջեւ  
ուարրեր մեկնութիւններ տալով խոստովանած է թէ խոտվարարական քոմի-  
լէին մասնակցած է, թէ Ռչտունի կողմէ տրուած կարգաւորութիւնները պա-  
րունակող ազգերը Գարաքիւլահ Օղլու Յովհաննէսի՝ Թավլըսըն Սթէֆէնէ  
զիւղերը տանելով փակցուցեր է, թէ Թալասցի Պետրոս Օղլու Միսաք իրեն  
ձին իրր աւանդ առեր է, ըսելով որ Տերեվէնքի վանքը պիտի երթայ, թէ ձին  
երկու օր բերած չըլլալով վանքը դացեր ու Դանիէլ վարդապետին հարցուցեր  
է, որ ըսեր է, թէ Միսաք իրիկուան կողմը վանքը դացեր եւ առանց կենալու  
մեկնել է, թէ մէկ քանի օր փնտուելէ յետոյ նորէն վանքը դացեր եւ Փանոսն  
ու Միսաք հոն գտնելով ձին ուզեր է, թէ Միսաք այստեղ մէջ սպիտակ ձի մը  
ցոյց առեր է իրեն՝ ըսելով որ իր ձիուն տեղ ուրիշ մը բերած էր, զոր առած  
էր ոստիկան-զինուորի մը ձեռքէն, թէ շարաթ մը յետոյ Դանիէլ վարդապետի  
հարցուցեր է, որ պատասխաններ է, թէ Մանճըսն զիւղին մէջ սպաննել տուած  
է այդ ձին, թէ աւելի առաջ Մարգուան երթալով հոն մասվաճառ Արթինի  
խօսքով Ծահպէնտէր օղլու Բարսեղի եղբորը՝ Արթինի տունը դացեր են կիւ-  
րինցի Մառուկեան Թորոսի, Գասպարի ու մասվաճառ Արթինի հետ եւ թէ,  
հոն անոնց խօսքերէն իմացեր է, որ Բարսեղ չընդունելով ընկերութեան մաս-  
նակցելու համար իրեն եղած առաջարկն՝ հրացան պարպեր են, սակայն չեն  
կրցեր զարնել, նկատելով որ կիւլպէնկի պատմած էր իր տղայութիւնը, պտը-  
տած տեղերը, յարած է նաեւ թէ Պոլսէն կնիկուրիի ճամբով Փանոսի ու Միրի-  
ճանի հետ իրենց զիւղը վերադառնալու ատեն կառապանը խեղդելով սպաններ  
են, թէ կիւրինցի Թորոսի հետ էֆքէրէի վանքին մէջ միանալով Մարգուան  
դացեր են ընկերութեան համար հարկ եղած ծառայութիւնները մատուցանելու  
նպատակով, թէ ի կեմերէկ Թորոս իրեն ձի մի առեր է, թէ Հաճիքէօյէն ե-  
կած լուրի մը վրայ Մարգուանէն Հաճիքէօյ երթալէ յետոյ Օսմանճըի թըղ-  
թատարին վրայ յարձակելով թղթատարին ձին վզէն զարկեր են, թէ իրենց  
նպատակը ստակ առնել չէր, այլ ընկերութեան կեղբորնին հրամանով ու ար-  
տօնութեամբ ցոյց մը ըրած էին եւ Չորուճի դարպանտին ոստիկան-զինուորին  
սպաննուելու եւ հրացանն առնուելու ատեն, ինչպէս որ զրել տուած էր կեն-  
սադրութեանը մէջ, ինք ներկայ չէր այլ իր ընկերը Թորոս՝ ըրած էր. նկա-  
տելով որ դատարանին առջեւ խոստովանելով հանդերձ ընկերութեան մաս-  
նակցած եւ ազգերը փակցուցած ըլլալը, ուզած է տարրեր մեկնութիւն մը տալ  
կենսադրութեան մէջ նշանակուած ոճիրներուն:

... Դատարանը խորհրդակցութիւններ կատարեց որոշուելիք պատիժնե-  
րուն վրայ եւ նկատելով Անտոն Ռչտունիի՝ ձէպիտէլիքեան Յակոբի, Ալաճաճ-  
եան Կարապետի, Տէօքմէճեան Բարսեղի, ձէվահիրճեան Ռուբէնի, Դանիէլ  
վարդապետի, Թումայեան Կարապետի, Գարայեան Յովհաննէսի, Քէրթման  
Օղլու Գարոյի, Բէհլօ Յակոբի, Քէչէճեան Միսաքի, ձիվանեան Մարտիրոսի,

Տաղպաղեան Յակոբի, Կեմերէկցի քաղաղիչ Մարտիրոսի, Մարգուանցի Փափաղեան Մկրտիչի, Գարակէօզ Օղլու Արթինի, Էվէրէկցի Վարնօ Օղլու Գարբէի, Կիւրինցի Կարապետի, Զօլաքեան Յակոբի, Պօյաճեան Ստեփանի, Քէւրպաճեան Սենեքերիմի, Յովնան Օղլու Արթինի, Տոլոնեան Յակոբի, Վարդանեան Միհրանի, Գալլպաճ Մոշոյի, Միմուխ Օղլու Արթինի, Սուրբիկի, Կառապան Յովհաննէսի, Գարաքիւլաճ Օղլու Յովհաննէսի, Գարա Բարսեղ Օղլու Դանիէլի, Օլլաքճեան Խաչատուրի, Ուղուն Օղլու Գալուստի, Միտիլ Օղլու Սարգիսի, փաստարան Արսէնի եւ ուսուցիչ Շաւարշի գործերն ու ընթացքը, ինչպէս նաեւ Արղլման Օղլու Յովհաննէսի, Եաղուպ Օղլու Փանոսի, Աչճը Բարսեղ Օղլու Կիւլպէնկի, Կէզիր Թորոս Օղլու Միրիճանի եւ Պետրոս Օղլու Միսաքի՝ Պատժական Դատաւարութեան առժամեայ Օրինաց 299-րդ յօդուածի տրամադրութեանը համաձայն ամենէն ծանր պատիժն հրաւիրող ոճիրները կը համապատասխանեն Պատժական Օրինաց 54րդ յօդուածի յաւելուածին արամադրութեան :

Եւ նկատելով, որ նոյն յօդուածի յաւելուածը կը տրամադրէ թէ՛ «այն անձինք որք կը ձեռնարկեն Օսմանեան տէրութեան երկիրներու մէկ մասը, կամ մէկ բաժանմունքը եւ կամ առանձնաշնորհեալ նահանգներէ մին՝ ամբողջովին կամ մասամբ բռնութեամբ միացնելու առանձնաշնորհեալ երկրի մը եւ կամ ընդհանուր առմամբ Օսմանեան երկիրներու մէկ մասը կառավարութեան վարչութեանն անջատելու, մահուամբ կը պատժուին, եւ եթէ պատիժը թեթեւցնելու նպատակով պարագաներ տեսնուին, առժամեայ բերդարդելութեան կը դատապարտուին հինգ տարիէն վար չըլլալու պայմանաւ» :

Հետեւաբար այդ յօդուածի տրամադրութեան համաձայն՝ ասոնցմէ Անտոն Ռշտունին, Ճէպիտէլիքեան Յակոբը, Ալաճաճեան Կարապետը, Տէօքմէճեան Բարսեղը, Դանիէլ վարդապետը, Թումայեան Կարապետը, Գարայեան Յովհաննէսը, Քերթման Օղլու Գարոն, Յակոբ Բեհլուն, Քէչէճեան Միսաքը, Ճիւլանեան Մարտիրոսը, Արղլման Օղլու Յովհաննէսը, Եաղուպ Օղլու Փանոսը, Աչճը Բարսեղ Օղլու Կիւլպէնկը, Կէզիր Թորոս Օղլու Միրիճանը, Պետրոս Օղլու Միսաքն ու Կիւրինցի Թորոսը միաձայնութեամբ մահուան դատապարտեց :

Թալասցի Տաղպաղեան Յակոբը, Կեմերէկցի քաղաղիչ Մարտիրոսը, Մարգուանցի Փափաղեան Մկրտիչը, Գարակէօզ Օղլու Արթինն, Էվէրէկցի Վարնօք Օղլու Գարբէիէն եւ Կիւրինցի Կարապետն՝ միաձայնութեամբ իրենց ձերբակալման թուականէն սկսեալ, որ է 16 Շաբաթ 1310 եւ 20 Փետրուար 1308, տասնչինգական տարուան բերդարդելութեան դատապարտեց :

Զօլաքեան Յակոբը, Պօյաճեան Ստեփանը, Քէպապճեան Սենեքերիմը, Յովնան Օղլու Մամսը, Տոլոնեան Յակոբը, Վարդանեան Միհրանը, Գալլպաճը Մոշոն եւ Միմուխ Օղլու Արթինը՝ միաձայնութեամբ տասնական տարուան բերդարդելութեան՝ սկսեալ իրենց ձերբակալման թուականէն, որ է 9 թէճէպ 1310 եւ 16 Յունուար 1308 :

Էվէրէկցի Սուրբիկը, Կառապան Յովհաննէսը, Գարա Քիւլաճ Օղլու Յովհաննէսը, Գարա Բարսեղ Օղլու Դանիէլը, Օլլաքճեան Խաչատուրը, Ուղուն Օղլու Գալուստը, Ատիբեան Ղազարոսը, Միտիլ Օղլու Սարգիսը, փաստարան Արսէնն եւ ուսուցիչ Շաւարշը՝ մեծամասնութեամբ՝ եօթնական տարուան բերդարդելութեան՝ սկսեալ իրենց ձերբակալման թուականէն, որ է 10 թէճէպ 1310 եւ 21 Յունուար 1308 :

Ճէվաճիրճեան Ռուբէնի համար ալ ի նկատի առնելով Կեսարիոյ կառա-

վարչին տեղեկագրի պարունակութիւնն ինչպէս նաեւ Պատժական Օրինաց 65րդ յօդուածը, որ կը տրամադրէ թէ անոնք, որք ապստամբներու եւ աւազակներու կարգէն ըլլալով, ապստամբութեան եւ աւազակութեան ձեռնարկելէ եւ խուզարկութիւններու կատարումէն առաջ իրենց յանցանքին համախոհներն իմաց կու տան տէրութեան պաշտօնեաներու եւ կամ խուզարկութեան սկսելէն յետոյ իրենց համախոհները ձերբակալել տալու միջոցները կը պատրաստեն, միւսներուն նկատմամբ ի գործ դրուելիք պատիժէն զերծ կը մնան եւ միայն ստաիկանութեան հսկողութեանը ներքեւ կը գրուին երկու տարին չանցնելու պայմանաւ: հետեւաբար ձէյվահիրձեան Ռուբէն իր արժանի եղած այդ պատիժէն ազատ կացուցուելով՝ դատապարտեց երկու տարի ստաիկանութեան հսկողութեանը ներքեւ մնալու:

Նոյնպէս նկատելով որ եղած վկայութեամբ անձնական դատախազ Իգզէթի ձիուն 16, ժամացոյցին՝ 1 հրացանին՝ 3 եւ պայտուակին՝ մէկ քառորդ ոսկի, գումար 18 ոսկի զին դրուած է, որոշեց այդ գումարէն զեղչել Իգզէթին թողուած ձիուն զինն, որ մշակներու ձեռքը գտնուած այդ կարգի ձիերու արժէքին նայելով սովորաբար հինգ ոսկի է, եւ մնացեալ 13 ոսկին վերոյիշեալ դատապարտեալներէն զանձելով յանձնել անձնական դատախազ Իգզէթին, նոյնպէս Մատէնի թղթատարին վերոգրեալ արձանագրութեան վաւերացեալ պատճէնին համաձայն, կողոպտեալ 20.062 զրուշ 25 փարան, որ եօթը կտոր աւանդներէ կը բաղկանայ եւ որուն 19.250 զրուշը ոսկեգրամ է եւ 812 զրուշ 25 փարան արծաթ գրամ, զանձելով դատապարտեալներէն՝ յանձնել թղթատարատան վարչութեան:

Միանգամայն որոշեց դատական ծախքը, 5900 զրուշ, հաւասարապէս զանձել դատապարտեալներէն: Ձեռք անցուած զէնքերը՝ Վինչէսթըրի երկու հրացաններ, Մարթինի հրացան մը եւ երկու բեվոյլերներ կառավարութեան յատուկ զէնքեր ըլլալով, ըստ օրինի յանձնել զօրաբաժնին:

Այս որոշմունք միաձայնութեամբ եւ ի ներկայութեան դատապարտելոց արուեսցան, 27 Ձիւլատէ 1310 եւ 31 Մայիս 1309ի Երկուշաբթի օրը:

Նախագահ՝ Հիւսէյիմ Հիւսնի Անդամը՝ Թեվֆիք, Ալի, Օննիկ, Եորկի

Դատաւորք վերադառնալով դատասրահը, նախագահը կարդաց օրինաց տրամադրութիւնը, այս որոշումը հաղորդեց եւ դատապարտութեան օրէնքներով սահմանեալ բոլոր դորձողութիւնք կատարուեցան:

Յանուն առաջին քարտուղարին

Վերաքննիչ ատեանի օգնական անդամ՝  
Հիւսնի

Նախագահ՝ Հիւսէյիմ Հիւսնի  
Քարտուղար՝ Գամիս

Ատենագրութեան այս պատճէնը բնագրին յար եւ նման է:

«ՀԱՅՐԵՆԻՔ», 1893, Բիւ 521, Պոլիս

Նախագահ՝ Հիւսէյիմ Հիւսնի

ՄԱՆՕԹ.— Այս «եաֆթա»ի պատմութիւնը անգլիացի քաղաքացի մը գործն էր: Օր մը «Տէյլը Նիուզ» քերթին կողմէ Ֆից ժերարդ անունով մէկը յարաբերութեան կը մտնէ Հնչակի խմբագրութեան հետ եւ բուրքերէն լեզուով երկու բռուցիկ կու տայ անոնց, ինքիւնով, որ Հնչակ կուսակցութիւնը զանոնք տարածէ թուրքիոյ զանազան գաւառներուն մէջ: Այդ «բռուցիկներուն» հայերէնը լայն կը տեսնէ Հնչակի 1892, Բիւ 9ին մէջ: Կարմիր բուրքի վրայ հրատարակուած այդ «եաֆթա»ն բազմապար օրինակներով կեդրոնին կողմէ կը զրկուին կուսակցութեան մասնաճիւղներուն, հրահանգելով որ անոնք մասնաւորապէս փակ-ըռնիմ կառավարակամ հաստատութիւններու, բարձր պաշտօնեաներու բնակարաններուն, զիւրի եւ քաղաքի հրատարակներուն վրայ: